



Հաստատված է
 ԳՊՀ գիտական խորհրդի 2007թ.
 հոկտեմբերի 15-ի թիվ 1 նիստում
 Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
 (15 հոկտեմբերի 2007թ.)

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Գավառի պետական համալսարանի հանրակացարանում (այսուհետ՝ Համալսարանի հանրակացարան) դասախոսների, ուսանողների, Համալսարանի համագործակից կազմակերպությունների ներկայացուցիչների տեղաբաշխման և բնակվելու կանոնները:
2. Սույն կանոնակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
3. Համալսարանի հանրակացարանի գտնվելու վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 4, Համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկեր:

II. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՏԵՂԵՐԻ (ՄԵՆՑԱԿՆԵՐԻ) ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Հանրակացարանում կարող են բնակվել այն դասախոսները, ովքեր ունեն հանրակացարանի կարիք և փաստացի չեն բնակվում Գավառ քաղաքում:
5. Հանրակացարանում կարող են բնակվել Համալսարանի միջազգային շարժունության և փոխանակման ծրագրերով Համալսարան այցելած բոլոր դասախոսները և ուսանողները:
6. Բացառիկ դեպքերում հանրակացարանում կարող է տեղ հատկացվել նաև՝
 - 1) զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների զավակներին,
 - 2) երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկներին,
 - 3) հաշմանդամություն ունեցողներին,
 - 4) 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ ծնողներ (խնամակալներ) ունեցողներին,
 - 5) ամուսնալուծված ծնողներ ունեցողներին,
 - 6) բազմազավակ՝ 3 և ավելի անչափահաս (կամ սովորող երեխաներ ունեցող) ընտանիքների զավակներին,
 - 7) սոցիալապես անապահով ընտանիքների զավակներին,
 - 8) այլ կարգավիճակ ունեցողներին՝ Համալսարանի ռեկտորի որոշմամբ:
7. Հանրակացարանում բնակությունն անվճար հիմունքներով է՝ Համալսարանի ֆինանսական միջոցների հաշվին, եթե ակադեմիական շարժունությանը վերաբերող միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
8. Հանրակացարանի յուրաքանչյուր սենյակում բնակվելու իրավունք ունի մինչ երկու անձ, այդ թվում՝ հերթափոխի սկզբունքով:
9. Հանրակացարանի տեղերի (սենյակների) բաշխումն իրականացվում է մինչև ուսումնական տարվա սկիզբը՝ օգոստոս ամսին:

10. Ազատ տեղերի առկայության դեպքում հանրակացարանում կարող են բնակվել նաև Համալսարանի հեռակա ուսուցման բաժնում սովորող ուսանողները, այլ համագործակից ուսումնական հաստատությունների սովորողները՝ ռեկտորի թույլտվությամբ, ինչպես նաև այլ անձինք (այլ երկրներից և բուհերից հրավիրված դասախոսները, Խաղաղության կորպուսի կամավորները, ընդունելության քննություն հանձնող դիմորդներ, նրանց ուղեկցող անձինք): Այլ ուսումնական հաստատություններին և այլ անձանց հատկացվող տեղերի չափաքանակները որոշում է Համալսարանի ռեկտորը:

11. Հանրակացարանում բնակվելու ցանկություն ունեցող դասախոսը Համալսարանի ռեկտորին դիմում է ներկայացնում հանրակացարանում սենյակի անհրաժեշտության մասին:

12. Հանրակացարանում բնակվելու ցանկություն ունեցող ուսանողը կիսամյակը սկսվելուց առնվազն մեկ ամիս առաջ դիմում է ներկայացնում Համալսարանի ռեկտորին:

13. Համալսարանի հանրակացարանում բնակվող անձանց ցուցակը յուրաքանչյուր կիսամյակ պահվում է Համալսարանի տնտեսական գծով պրոռեկտորի մոտ:

14. Հանրակացարանում արական և իգական սեռերի ներկայացուցիչները բնակեցվում են տարբեր սենյակներում: Տարբեր սեռի անձանց նույն սենյակում բնակեցնելն արգելվում է:

15. Հանրակացարանի կոմունալ սպասարկման, սանիտարահիգիենիկ վիճակի և մաքրության պահպանման, պահակային ծառայության, էլեկտրաէներգիայի, ջեռուցման, ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներն իրականացվում են Համալսարանի կողմից:

III. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

16. Հանրակացարանում բնակվողներն իրավունք ունեն՝

- 1) օգտագործման նպատակով հանրակացարանի պարետից ստանալու կացության համար անհրաժեշտ պարագաներ և գույք,
- 2) սահմանված կարգով օգտվելու հանրակացարանի համակարգչային սենյակից, սանհանգույցից, լվացքատնից, խոհանոցից և լոգարանից,
- 3) պահանջելու հանրակացարանի սպասարկող անձնակազմից բնակության և հանգստի բնականոն պայմանների, անհրաժեշտ կարգուկանոնի ապահովում,
- 4) սահմանված կարգով իրենց սենյակներում ընդունելու ծնողներին, հարազատներին, ծանոթներին,
- 5) տևական ժամանակահատվածով հանրակացարանում չբնակվելու և սենյակի բանալիները սահմանված կարգով պարետին հանձնելու դեպքում նրանից պահանջելու անձնական իրերի պահպանության,
- 6) իրենց խնդիրները ներկայացնելու ռեկտորին:

17. Հանրակացարանում բնակվող անձինք պարտավոր են ենթարկվել ներքին կարգուկանոնին, այդ թվում՝

- 1) պահպանել քաղաքացիական համակեցության կանոնները,
- 2) հետևել հանրակացարանի ներքին կարգացուցակին (ռեժիմ),
- 3) արգելք չհանդիսանալ մյուս բնակիչների բնակվելուն,
- 4) խնամքով պահպանել գույքը և մաքրությունը, թե՛ սենյակում, թե՛ ընդհանուր օգտագործման վայրերում (միջանցքներում, հանրակացարանի հարակից տարածքներում),
- 5) հետևել սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության կանոններին,
- 6) կատարել հանրակացարանի պարետի բոլոր օրինական պահանջները:

18. Հանրակացարանում բնակվող ուսանողներին արգելվում է.

- 1) աղմկել, աղտոտել շրջապատը կամ կատարել գործողություններ, որոնք կարող են խոչընդոտել հանրակացարանի բնականոն գործունեությանը,

- 2) առանց հատուկ թույլտվության կամ ծայրահեղ անհրաժեշտության ներկայանալ կամ դուրս գալ հանրակացարանից ժամը 00:00-ից մինչև հաջորդ օրվա 6:00,
 - 3) ժամը 22:00-ից հետո պահպանել հանրակացարանի անդորրը:
19. Մույն պահանջներին չհետևելը կարող է դիտվել որպես վարչական և քաղաքացիական իրավունքի խախտում՝ հանգեցնելով պատասխանատվության:
 20. Հանրակացարանի պարետը պարտավոր է հետևել հանրակացարանի ներքին կարգուկանոնին, կարգավորել բնակիչների համակեցության հետ կապված հարցերը:
 21. Հանրակացարանին նյութական վնաս հասցնելու դեպքում բնակվողը սահմանված կարգով ենթարկվում է նյութական պատասխանատվության՝ հասցված վնասը փոխհատուցելով համարժեք դրամով կամ իրով:
 22. Ուսումնական տարվա ավարտին հանրակացարանում բնակվող բոլոր անձինք պարտավոր են բանալիները հանձնել հանրակացարանի պարետին, ինչպես նաև ըստ ամրագրման ցուցակի և սահմանված կարգի հանձնել հատկացված գույքը և ազատել հանրակացարանային տեղը (սենյակը):
 23. Հանրակացարանում կողմնակի անձանց գիշերելը խստիվ արգելվում է: